Ոստիկանություն-հասարակություն գործընկերություն

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան

2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *2*

ՄԱՍ 1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ *4*

ՄԱՍ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄ *21*

ՄԱՍ 2.1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ *21*

Հարցում *21*

Հարցման ենթարկվածների ընդհանուր բնութագիրը *25*

Սեռ *25*

Տարիք *27*

Կրթական մակարդակ *29*

Ընտանեկան դրություն *30*

Զբաղվածություն *32*

Քաղաքային և գյուղական բնակչություն *34*

ՄԱՍ 2.2. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ *36*

Հարցման արդյունքների վերլուծությունը ՀՀ կտրվածքով *36*

Հարցաթերթիկ *66*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան բռնության հիմնախնդիրը ՀՀ-ում առավել արդիականություն ներկայացնող հարցերից է, որի հանդեպ ուշադրությունը առանձնահատուկ աճ է գրանցել հատկապես վերջին տասնամյակների ընթացքում: Բնական է, որ այս երևույթը միշտ էլ առկա է եղել մեր հասարակությունում (ինչպես և ցանկացած հասարակությունում), այնուհանդերձ Խորհրդային Միության տարիներին իրավական խիստ գործուն միջոցների առկայությունը հասարակության անդամների մեծամասնությանը հետ էր պահում բռնության գործադրումից, իսկ նման դեպքերի արձանագրման պարագայում ընտանիքի անդամները ամեն կերպ քողարկում էին կատարվածը:

Խորհրդային միության փլուզումից հետո խորհրդային հասարակության արժեքային համակարգի փլուզումը հանգեցրեց անոմիայի վիճակի,[1] և կտրուկ աճ գրանցվեց բռնությամբ կատարվող հանցագործությունների դինամիկայում: Սոցիալական հակասությունների և բարդությունների առկայությունն էլ նպաստեց հասարակության մի ստվար խմբի շրջանում հակահիրավական և հակաբարոյական կողմնորոշումների տարածմանը, այդ թվում՝ բռնի վարքագծի դրսևորմանը:

Ընտանեկան բռնության վերաբերյալ վերջին տասնամյակում բազմաթիվ ուսումնասիրություններ են իրականացվել, որոնք ներառել են ինչպես ՀՀ օրենսդրական հիմքի վերլուծություն, այնպես էլ հասարակական հարցումների իրականացում:[2] Այնուհանդերձ, նշված

---

[1] Անոմիան հասարակության այնպիսի վիճակ է, երբ քաղաքական, տնտեսական, սոցիալական ինստիտուտների ճգնաժամի հետևանքով տեղի է ունենում հասարակության արժեքային համակարգի քայքայում և առաջանում է հակասություն անձի հնարավորությունների և հասարակությունում հռչակված նոր արժեհամակարգի միջև:

[2] Լռությունը պատվաբեր չէ. Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքար. Amnesty International, 2008, Համահանրապետական հարցում Հայաստանում կանանց հանդեպ ընտանեկան բռնության վերաբերյալ 2008-2009, ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային

ուսումնասիրություններից և ոչ մեկը հատուկ ուշադրություն չի դարձրել ոստիկանություն-հասարակություն փոխգործունեությանը՝ ընտանեկան բռնությունների կանխարգելման առումով: «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից կատարված ուսումնասիրության նպատակն էր պարզել, թե որքանով է բնակչությունը ընտանեկան բռնության զոհ դառնալիս վստահում ոստիկանությունը և ոստիկանություն դիմելու պարագայում ինչ արձագանք է ստացվում:

Ցավոք, ՀՀ-ում չի վարվում ընտանեկան բռնության դրսևորումների վերաբերյալ միասնական վիճակագրություն, որը թույլ կտար տասնյակ տարիների կտրվածքով ուսումնասիրության ենթարկել ընտանեկան բռնության վիճակը, զարգացման միտումները, պատճառներն ու դրա կիրառմանը նպաստող գործոնները, ուստի վերլուծությունների ժամանակ հիմնականում օգտագործվում են այլընտրանքային աղբյուրներ՝ բնակչության կամ կանանց շրջանում կատարված հարցումներ, ոստիկանության կամ այլ իրավապահ մարմինների, ՀԿ-ների, գիտնական - փորձագետների կարծիքներ, ՀԿ-ների կողմից տրամադրված տվյալներ[3] և այլն:

բռնության Հարավային կովկասում» ծրագիր, Երևան 2010, Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն ու ճնշումը Հայաստանում. Համազգային հարցման արդյունքների զեկույց, Կանանց իրավունքների կենտրոն, Երևան 2007, ՀՀ օրենսդրության փորձաքննություն գենդերային բռնության տեսանկյունից, ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային կովկասում» ծրագիր, Երևան 2009:

[3] www.genderbasedviolence.am, Լռությունը պատվաբեր չէ. Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքար. Amnesty International, 2008, Համահանրապետական հարցում Հայաստանում կանանց հանդեպ ընտանեկան բռնության վերաբերյալ 2008-2009, ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային կովկասում» ծրագիր, Երևան 2010, Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն ու ճնշումը Հայաստանում. Համազգային հարցման արդյունքների զեկույց, Կանանց իրավունքների կենտրոն, Երևան 2007, ՀՀ օրենսդրության փորձաքննություն գենդերային բռնության տեսանկյունից, ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային կովկասում» ծրագիր, Երևան 2009:

ՄԱՍ 1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ցանկացած հակահիրավական երևույթի դեմ արդյունավետ պայքար մղելու, դրա նկատմամբ վերահսկողություն սահմանելու և հնարավոր դրսևորումները կանխելու առաջնահերթ խնդիրը դրա վիճակի գնահատումն է: Այդ առումով բացառություն չէ նաև ընտանեկան բռնությունը:

Ամենակարևոր խնդիրներից մեկը «ընտանեկան բռնություն» երևույթի սահմանումն է, դրա շրջանակի որոշումը: ՀՀ օրենսդրությամբ ընտանեկան բռնության բնորոշում, որպես այդպիսին, առկա չէ:

Ընտանեկան բռնության բնորոշումները տարաբնույթ են. այն դիտարկվում է որպես փաստացի ընտանեկան հարաբերություններում այնպիսի վարքագծի դրսևորում, որով մի անձը իշխանություն կամ վերահսկողություն է հաստատում կամ այն պահպանում ընտանիքի մյուս անդամի հանդեպ: Ընտանեկան բռնությունը կարող է դրսևորվել այն ժամանակ երբ կողմերը գտնվում են գրանցված կամ փաստական ամուսնական հարաբերություններում, ամուսնալուծված են կամ դեռ միայն նշանված, և նույնիսկ այն ժամանակ երբ կողմերը դեռ միայն հանդիպում են: Ընտանեկան բռնության զոհի կարգավիճակում կարող են հայտնվել ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, ինչպես երիտասարդները, այնպես էլ տարեցներն ու երեխաները, ինչպես անապահովները, այնպես էլ ֆինանսապես խիստ ապահովված անձինք, ինչպես կրթություն չունեցող, այնպես էլ բարձրագույն կրթությամբ անձինք:

Ըստ բռնություն գործադրող սուբյեկտների տարբերակվում են՝

1. ծնողների կամ ընտանիքի չափահաս անդամի կողմից երեխաների հանդեպ բռնությունը,

2. զուգընկերոջ կամ ամուսնու (թե՛ կին, թե՛ տղամարդ) դեմ ուղղված բռնությունը,
3. զուգընկերոջ կամ ամուսնու ծնողների կողմից կատարվող բռնությունը,
4. զավակների կողմից ծնողների հանդեպ բռնությունը,
5. մեկ երեխայի կողմից մյուսի նկատմամբ բռնությունը,

Տարբերակվում են ընտանեկան բռնության մի շարք դրսևորումներ՝

ա) ֆիզիկական բռնություն (ծեծ, ֆիզիկական խոշտանգում, առողջությանը վնասի պատճառում, հրել, քաշքշել, ազատությունից զրկել, ապտակել և այլն),

բ) հոգեբանական բռնություն (սպառնալիք, ահաբեկում, հոգեբանական նվաստացում և այլն),

գ) սեքսուալ բռնություն (սեքսուալ կարիքների բավարարում կամ դրանց բավարարման պահանջ առանց մյուս կողմի ցանկությունը հաշվի առնելու և այլն),

դ) տնտեսական բռնություն (ընտանիքի անդամի ֆինանսական միջոցների խստիվ վերահսկում, սննդից, հագուստից զրկել և այլն),

ե) սոցիալական բռնություն (հարազատների կամ ընկերների հետ շփման արգելք կամ խիստ վերահսկում, աշխատելու արգելք և այլն):

Սրանցից առավել հաճախ հաղորդվողը ֆիզիկական բռնությունն է, ավելին, հասարակության անդամներից շատերը չեն էլ գիտակցում, որ հիվանդագին խանդի դրսևորումները, ընկերների կամ հարազատների հետ շփման վերահսկումը կամ արգելքը, նյութական միջոցների խստիվ վերահսկումը իրենցից ընտանեկան բռնություն են ներկայացնում: Մասնավորապես, ԵԱՀԿ-ի պատվերով «Պրոակտիվ հասարակություն» ՀԿ-ի կողմից իրականացված ներկայացվող հարցման արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում հարցված անձինք ընկալում են, որ ծեծն ու մարմնական վնասվածքի

պատճառումը ընտանեկան բռնության դրսևորում են, սակայն հարցվածների միայն 3.3%-ը որպես ընտանեկան բռնության դրսևորում համարեց ընտանիքի չափահաս անդամի ֆինանսական միջոցների խստիվ վերահսկումը, իսկ 18.4%-ը՝ ընտանիքի չափահաս անդամների ազատ տեղաշարժման իրավունքի խստիվ վերահսկումը:

Հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությունը ևս հեռու է այս ոլորտում կարգավորում ստացած իդեալական դաշտ ձևավորելուց: Մասնավորապես, ընտանեկան բռնության ենթարկված անձանց շահերի պաշտպանությունը իրականացվում է ՀՀ քրեական, քրեական դատավարության, քաղաքացիական, վարչական իրավախախտումների վերաբերյալ և ընտանեկան օրենսգրքերի հիման վրա:

Այս առումով, կարևորվում է հատկապես քրեական օրենսդրության դերը: ՀՀ օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի շրջանակներում պատասխանատվություն է սահմանում սպանության, անզգուշությամբ մահ պատճառելու, ինքնասպանության հասցնելու, ինքնասպանության հակելու[4], անձի առողջությանը դիտավորությամբ ծանր, միջին ծանրության, թեթև վնաս պատճառելու, անձի առողջությանը անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, ծեծի, խոշտանգման, մարդուն առևանգելու և ապօրինաբար ազատությունից զրկելու, սպանության, անձի առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու սպառնալիքի, բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու, 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, անառակաբարո գործողությունների համար և այլն: Թեև ՀՀ քրեական օրենսգրքում հիշյալ նորմերի առկայությունը հնարավորություն է տալիս պատասխանատվության

[4] Ինքնասպանության հասցնելը սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին ինքնասպանության կամ դրա փորձի հասցնելն է, իսկ ինքնասպանության հակելը՝ հորդորելու, խաբեության կամ այլ միջոցով անձի մոտ ինքնասպանության կատարելու վճռականություն հարուցելն է, եթե դրա արդյունքում անձն ինքնսպան է եղել կամ նման փորձ է կատարել:

ենթարկել ընտանեկան բռնություն գործադրած անձին, սակայն ընտանեկան բռնության, նույնիսկ ֆիզիկական բռնության ոչ բոլոր դրսևորումների դեպքում է դա հնարավոր:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսդրությունը պատասխանատվություն չի սահմանում, օրինակ, ընտանեկան բռնության այնպիսի դրսևորումների համար, ինչպիսիք են աբորտ կատարելուն հարկադրելը, անձին առևանգելը տուժողի անօգնական վիճակը օգտագործելով և այլն: Ավելին, գործող քրեական օրենսգրքում կիրառվող հասկացությունները հաճախ տարակարծությունների տեղիք են տալիս և մեկնաբանությունները դոկտրինալ բնույթի են, որոնք պարտադիր ուժ ունենալ չեն կարող: Մասնավորապես, ինքնասպանության հասցնելու (հոդված 110) համար պատասխանատվություն սահմանող նորմում օրենսդիրը նշում է. «Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը»:

Հիշյալ հանցակազմի ձևակերպման ժամանակ օգտագործված հասկացությունները՝ «դաժան վերաբերմունք», անձնական արժանապատվության «պարբերաբար նվաստացում», հստակեցման և պաշտոնական մեկնաբանման կարիք ունեն, այլապես դրանք հիմք են տալիս անձի իրավունքների պաշտպանության խոցելիության համար:

Կամ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 105-ում նախատեսված հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության համար պատասխանատվություն սահմանող դրույթը նշում է «տուժողի գործադրած բռնության, ծաղրուծանակի, ծանր վիրավորանքի կամ այլ հակաիրավական կամ հակաբարոյական գործողությունների (անգործության), ինչպես նաև տուժողի՝ պարբերաբար դրսևորած հակաիրավական կամ հակաբարոյական վարքագծի կապակցությամբ առաջ եկած երկարատև հոգեճնշող իրավիճակի հետևանքով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում

կատարված սպանությունը»: Այս ձևակերպման մեջ առկա են հասկացություններ, որոնք կամ տարակարծությունների տեղիք են տալիս և մեկնաբանության կարիք ունեն, կամ էլ գնահատողական բնույթի են: Օրինակ, «ծանր վիրավորանք» հասկացությունը գնահատողական բնույթ ունի, քանի որ եթե քիչ թե շատ ընկալելի է «վիրավորանք» հասկացությունը, ապա դրա «ծանր» լինելու հանգամանքը, հստակ չափանիշների բացակայության պարագայում, լիովին կախված է իրավակիրառողից: Օրենսդրորեն սահմանված չէ նաև «բռնության» հասկացությունը. Քրեահրավական դոկտրինան սահմանում է, որ օրենսդիրը նկատի ունի ֆիզիկական, սեքսուալ կամ հոգեբանական բռնությունը, մինչդեռ իրականում բռնությունը կարող է լինել նաև տնտեսական, և այստեղ արդեն խնդիր է առաջանում հիշյալ նորմի կիրառման հետ կապված:

Ընտանեկան բռնություն գործադրած անձին պատասխանատվության ենթարկելու առումով ավելի լուրջ իրավիճակ է ստեղծվում այն դեպքերում, երբ բռնարարի կողմից կիրառվում է ոչ թե ֆիզիկական կամ սեքսուալ, այլ հոգեբանական կամ տնտեսական բռնություն: ՀՀ քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանվում է սպանության, անձի առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքի ոչնչացման սպառնալիքի դեպքերում: Որոշակի կանոնակարգում իրականացվում է նաև խուլիգանության հանցակազմի միջոցով. խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ ներընտանեկան բռնությունը այնպիսի ընթացք է ստանում, որ սկսում է խախտել հասարակական կարգը, հարևանների անդորրը: Թեև, հարկ է նշել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանում առկա է նախադեպային որոշում, որի համաձայն արարքը խուլիգանություն որակելու համար անհրաժեշտ է խուլիգանական շարժառիթների առկայությունը, մինչդեռ ընտանեկան բռնության դրսևորումների դեպքում դրանք, որպես կանոն, բացակայում են և արարքի կատարումը պայմանավորված է կենցաղային, ինքնահաստատման կամ նմանատիպ շարժառիթներով:

Խուլիգանության հանցակազմի բացակայության պարագայում, նման իրավիճակները կանոնակարգում են ստանում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 180-ով, որը նախազգուշացում կամ նվազագույն աշխատավարձի 20-30-պատիկի չափով տուգանքի կիրառում է սահմանում գիշերը (ժ 22-06.00) լռության խախտման համար: Նախ, վերջին դրույթն ինքնին կանոնակարգման շատ քիչ հնարավորություններ է ընձեռում, եթե, օրինակ դեպքը տեղի է ունեցել ժամը 06.01-ից 21.59 ընկած ժամանակահատվածում: Բացի այդ, անհասկանալի է, թե օրենսդիրը հետագա ինչ միջոցներ է նախատեսում նման վարքագծի պարբերականության դեպքում:

Բացի այդ, ՀՀ օրենսդիրը ոչ քրեական, ոչ էլ վարչական պատասխանատվություն, հետևաբար նաև գործուն ներգործության ու զոհերի պաշտպանության միջոցներ չի նախատեսում այն դեպքերում, երբ ընտանեկան բռնությունը պարբերաբար տեղի է ունենում ընտանիքի ներսում՝ դուրս չգալով դրա սահմաններից և չվերածելով խուլիգանության:

Հոգեբանական բռնության այնպիսի տարատեսակներ, ինչպիսիք են վիրավորանքը, զրպարտությունը կանոնակարգվում են քաղաքացիական իրավունքի շրջանակներում, ուստի ընտանեկան բռնության ենթարկված անձը նման դեպքերում ինքնուրույն պետք է կարողանա պաշտպանել իր իրավունքները: Սակայն, այստեղ արդեն ի հայտ է գալիս մեկ այլ խնդիր կապված ապացույցների ձեռք բերման և դրանք դատական կարգով ներկայացման հետ: Ընտանեկան բռնության դեպքերը առավել հաճախ կատարվում են առանց ականատեսների, ուստի ընտանեկան բռնության զոհի համար գրեթե անհնարին է իր իրավունքների պաշտպանությունը:

Տնտեսական բռնության պարագայում հարցի կանոնակարգումը կրկին իրականացվում է քաղաքացիական և ընտանեկան օրենսդրության շրջանակներում, որոնք ընտանեկան բռնության զոհի վրա են դնում իր ոտնահարված իրավունքների պաշտպանության առաքելությունը: Թերևս հիմնական բացառությունը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված

173-ին և 174-ին: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 173-ը պատասխանատվություն է սահմանում ծնողի կողմից երեխային կամ 18 տարին լրացած անաշխատունակ զավակին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց 3 ամսից ավելի չարամտորեն խուսափելու, իսկ հոդված 174-ը՝ անաշխատունակ կամ նյութական օգնության կարիք ունեցող ծնողին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց 3 ամսից ավելի չարամտորեն խուսափելու համար: Երկու դեպքում էլ որպես պատիժ նախատեսվում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի 100-200-պատիկի չափով: ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված լինելու պարագայում, սակայն, այս նորմերը գործնականում արդյունավետ չեն կիրառվում, ինչի պատճառներից մեկը դրանց ձևակերպման ժամանակ «չարամտորեն» եզրույթի կիրառումն է: Վերջինս կրկին գնահատողական բնույթ ունի և չարաշահումների տեղիք է տալիս:

Բացի նյութական իրավունքում տեղ գտած թերություններից, ընտանեկան բռնության կանխարգելման արդյունավետ իրականացմանը, դրա լատենտայնության նվազեցմանը խոչընդոտում են նաև ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում տեղ գտած մի շարք ձևակերպումներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է քրեական գործի հարուցման կարգին և քրեական պատասխանատվությունից ազատելուն: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 183-ում թվարկված են այն հանցագործությունները, որոնց վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Այդ հանցագործությունների շարքին են դասվում նաև անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու հիմնական հանցակազմը, անձի առողջությանը թեթև վնաս պատճառելը, ծեծը, խոշտանգման հիմնական հանցակազմը, սպանության, առողջությանը ծանր վնաս հասցնելու կամ գույքը ոչնչացնելու սպառնալիքը: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 73-ը սահմանում է, որ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է

ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը:

Մեր կողմից ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի պատվերով անցկացված հարցման արդյունքները վկայում են, որ ընտանեկան բռնության ենթարկված, սակայն իրավապահ մարմիններ չդիմած անձանց կողմից վերջիններիս չդիմելու հիմնական պատճառը (41.6%-ի համար) հարազատին (թեկուզև բռնարար) քրեական պատասխանատվության ենթարկվելու վտանգից զերծ պահելն է: Ստացվում է, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նորմերը ոչ թե պաշտպանում են ընտանեկան բռնության զոհին, այլ ընդհակառակը՝ նպաստում կատարված արարքների լատենտայնացմանը (գաղտնի, չգրանցված պահելուն) և նրա հանդեպ ոտնձգությունների շարունակմանը: Մինչդեռ մասնավոր մեղադրանքի, այսինքն՝ միայն տուժողի բողոքի հիման վրա գործի հարուցման ենթակա արարքների շրջանակի լայնացումը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել ընտանեկան բռնության զոհերի իրավունքների պաշտպանությունը:

Բացի այդ, օրենսդիրը գործող քրեական դատավարության օրենսգրքում տուժողի բողոքի հիման վրա գործի հարուցման ենթակա արարքների շրջանակի որոշման ժամանակ մի շարք դեպքերում սահմանափակում է տուժողի կամքի արտահայտման հնարավորությունը միայն կոնկրետ հանցակազմերի հիմնական տեսակներով: Մասնավորապես, եթե միջին ծանրության վնաս է պատճառվել կնոջ առողջությանը և նա դիմել է իրավապահ մարմնին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 183-ի ուժով տուժողը դեռևս կարող է իր կամքի առկայության պարագայում, մինչև դատարանի կողմից դատավճռի կայացման համար խորհրդակցական սենյակ հեռանալը, դադարեցնել գործի հետագա ընթացքը: Սակայն, եթե պարզվի, որ բռնության գործադրման ժամանակ տուժողը հղի էր կամ անչափահաս, օրենսդիրը արդեն զրկում է կնոջը նման հնարավորությունից:

Օրենքների նման տարբերակման պարագայում իրավական նրբություններին չտիրապետող ընտանեկան բռնության զոհը, չցանկանալով իր, թեկուզև իր հանդեպ բռնություն գործադրած հարազատին տեսնել դատապարտյալի կարգավիճակում, նախընտրում է ընդհանրապես չդիմել իրավապահ մարմիններին:

Նմանատիպ վիճակ է ստեղծվում նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 73-ի կիրառման ժամանակ, քանի որ նախ օրենսդիրը նշում է, որ միայն ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը, այսինքն էապես սահմանափակում է հոդված 73-ի կիրառման շրջանակը: Բացի այդ, հոդված 73-ի ձևակերպման ժամանակ օգտագործելով «անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից» արտահայտությունը, ոչ թե տուժողին, այլ դատարանին է օժտում կամայական որոշում կայացնելու իրավունքով:

Բացի այդ, կանոնակարգման կարիք ունեն նաև այն դեպքերը, երբ տուժողի կամ բռնարարի կարգավիճակում են հայտնվել անչափահասները, անգործունակները, հոգեկան խանգարում ունեցող անձինք: Այս հարցերի արդյունավետ կանոնակարգումը ոչ մեր օրենսդրությունը, ոչ էլ դատական պրակտիկան չեն իրականացրել: Բնական է, որ անչափահաս տուժողի պարագայում վերջինիս շահերը պետք է ներկայացվեն նրա օրինական ներկայացուցչի կողմից, ինչը, սակայն, միշտ չէ, որ հնարավորություն է տալիս արտահայտել անչափահասի դիրքորոշումը:

Թերևս նման պարագայում պետք է մշակվի այնպիսի համակարգ, որը առավել լայն հնարավորություն կտա ընտանեկան բռնության զոհին՝ բռնարարի հետագա ճակատագրի որոշման հարցում:

Այս առումով չափազանց կարևոր նշանակություն ունի նաև այն դրույթի լրամշակումը, որը պարտավորեցնում է բժիշկներին բռնության նշաններով հիվանդների իրենց դիմելու պարագայում անհապաղ հաղորդել ոստիկանություն: Լինելով բռնության կանխարգելման գործուն քայլ, նման

մեխանիզմի առկայությունը նաև հակադարձ արդյունքի է հանգեցնում, երբ բռնության զոհ դարձած անձը իր բռնարար հարազատին իրավապահ մարմիններից զերծ պահելու համար, նախընտրում է առողջական խնդիրների առկայության պարագայում չդիմել բուժօգնության: Մասնավորապես, նման մի օրինակ է Օ.-ի դեպքը՝

Օ.-ն, 55 տ., տեղեկանալով որ 30-ամյա որդին թմրանյութ է օգտագործում և ցանկանալով հետ պահել վերջինիս այդ կործանարար ուղուց, փորձում է խոսել որդու հետ: Թմրանյութի ազդեցության տակ գտնվող որդու հետ զրույցը, սակայն, մոր համար ավարտվում է դաժան ծեծով, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում դիմել բուժօգնության: Քաջ գիտակցելով, որ հիվանդանոց դիմելու պարագայում ոստիկանությունը տեղեկանալու է կատարվածի մասին, Օ.-ն նախընտրում է չդիմել իր համար անհրաժեշտ բուժօգնության:

Ընտանեկան բռնության կանխարգելման հարցում չափազանց կարևոր է ՀՀ օրենսդրությամբ այնպիսի ներգործության միջոցների նախատեսումը, որոնք հնարավորություն կտան ապահովել ընտանեկան բռնության զոհի անվտանգությունը և ապահովել նրան կացարանով: ՀՀ-ում գործող պրակտիկայի համաձայն, ինչը անմիջական արդյունք է ՀՀ օրենսդրության չկանոնակարգման, ընտանեկան բռնության ենթարկված անձը (հիմնականում կինը) լքում է տունը և ապաստան գտնում կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ի օթևանում: «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության տվյալներով 2009 թ.-ին ճգնաժամային կենտրոնում ապաստան է տրամադրվել 42 անձի, որոնցից 15 կնոջ և 27 երեխայի: Ստացվում է, որ անձի նկատմամբ ոչ միայն բռնություն է գործադրվել, այլև նա ստիպված է լքել իր բնակավայրը, ապրել զրկանքների մեջ, մինչդեռ բռնություն գործադրողը պետք է շարունակի իր բարվոք կյանքը և կատարվածի համար բացասական հետևանքներ չկրի և ոչ էլ ուղղման փորձ կատարի: Նման պարագայում առավել ընդունելի կլինի Գերմանիայի, Ավստրիայի օրինակով ՀՀ օրենսդրության մեջ «տունը լքելու» հրամանի

կիրառումը, որը պետք է կիրառվի բռնություն գործադրած անձի վրա: Նման պարագայում բռնություն գործադրող անձը պարտավոր է ժամանակավորապես հեռանալ, նույնիսկ եթե բնակարանը պատկանում է իրեն սեփականության իրավունքով, իսկ տուժողը պետք է շարունակի իր բնականոն կյանքը մինչև հարցի լուծումը: Տանից հեռացվելու ընթացքում բռնարարի վրա կարող է պարտականություն դրվել այցելել հոգեբանական խորհրդատվության, առաջին հերթին՝ագրեսիայի վերահսկման նպատակով: Բացի այդ, բռնություն գործադրած անձի վրա կարող է արգելք դրվել որոշակի տարածության վրա մոտենալ ընտանեկան բռնության զոհին: Նման դրույթների նախատեսումը ոչ միայն կապահովի ընտանեկան բռնության զոհերի անվտանգությունը, այլև կբարձրացնի իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը, հատկապես նկատի ունենալով այն, որ ներկայումս իրավապահ մարմինների կողմից հնարավոր չէ ապահովել ընտանեկան բռնության զոհերի անվտանգությունը անհատական մակարդակում:

Ընտանեկան բռնության կանխարգելման հարցում չափազանց կարևոր է իրավապահ մարմինների, հատկապես ոստիկանության դերը: Ներկայումս ընտանեկան բռնության հարցերով ՀՀ Ոստիկանության համակարգում առավելապես զբաղվում են Հասարակական կարգի պահպանության տեղամասային տեսուչները, Անչափահասների հարցերով վարչության և հանցագործությունների կանխարգելման մեջ ընդգրկված այլ աշխատակիցները: Ոստիկանության քննչական վարչությունը զբաղվում է արդեն իսկ գրանցված դեպքերի քննությամբ:

Սակայն, առաջին խնդիրը, որը անմիջականորեն աչքի է ընկնում ընտանեկան բռնության կանխարգելման առումով ոստիկանության գործառույթները քննարկելիս, վերաբերում է ընտանեկան բռնության կանխարգելմամբ զբաղվող ոստիկանության աշխատակիցների քանակին և պատրաստվածությանը: Հարցված փորձագետներից մեկի պնդմամբ, ներկայումս ողջ ՀՀ տարածքում գործում են հասարակական կարգի

պահպանությամբ զբաղվող 543 տեղամասային ոստիկաններ, որոնցից միայն 405-ն են տեղամասային տեսուչներ: Նախատեսվում է, որ 2-ական ոստիկան պետք է սպասարկի 10 000 անձի, և դա այն պարագայում, որ տեղամասային տեսուչների գործառույթները չեն սահմանափակվում միայն ընտանեկան բռնության կանխարգելման հարցերով, այլ ներառում են ապօրինի զենք, զինամթերքի, թմրամիջոցների, առևանգված տրանսպորտային միջոցների հայտնաբերում և այլն: Եթե հաշվի առնենք նաև այն, որ ՀՀ-ում բնակչության բաշխումը համաչափ չէ և մի շարք դեպքերում, հատկապես ՀՀ մարզերի լեռնային շրջաններում, 10 000 հոգին կարող են բնակվել իրարից մի քանի կմ հեռավորության վրա գտնվող, մի քանի գյուղերում, հասկանալի է, որ առկա ռեսուրսները բավարար լինել չեն կարող: Միաժամանակ, նման պարագայում հնարավոր չէ ապահովել նաև տեղամասային տեսուչների աշխատանքի արագ արձագանքումը, քանի որ տեխնիկական թերհագեցվածությունը հնարավորություն չի ընձեռում վերջիններիս արագ հասնել դեպքի վայր և կանխել ոտնձգությունը:

Բացի ոստիկանության աշխատակիցների քանակից, կարևոր խնդիր է նաև վերջիններիս պրոֆեսիոնալ պատրաստվածության հարցը: ԵԱՀԿ-ի պատվերով «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից կատարված, ստորև ներկայացվող հարցման արդյունքները վկայում են, որ ընտանեկան բռնության զոհերի կողմից իրավապահ մարմիններին չդիմելու պատճառներից են ընտանեկան բռնության զոհերի հետ շփվելու վերջիններիս հոգեբանական պատրաստվածության բացակայությունը՝ 18.4%, ինչպես նաև ոստիկանությունում ընտանեկան բռնության զոհերի հետ անմիջականորեն աշխատող կին-ոստիկանների բացակայությունը՝ 5.3%: Ընդ որում, եթե Երևան քաղաքում հնարավոր է ապահովել ընտանեկան բռնության զոհի հետ ոստիկանության իգական սեռի աշխատակցի շփումն ու աշխատանքը, ապա մարզերի ճնշող մեծամասնությունում դա անհնարին է կին-ոստիկանների բացակայության պատճառով:

Ինչ վերաբերում է ընտանեկան բռնության զոհերի հետ աշխատող ոստիկանների հոգեբանական պատրաստվածությանը, ապա թեև նրանք բոլորն էլ ՀՀ Ոստիկանության ակադեմիայի շրջանավարտներ են և, որպես պարտադիր դասընթաց, անցել են հոգեբանություն, սակայն դա նրանց մոտ պրակտիկ հմտություններ չի ձևավորել հանցագործությունների, այդ թվում՝ ընտանեկան բռնության զոհերի հետ գրագետ աշխատելու առումով: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ոստիկանների հոգեբանական ոչ թե միայն տեսական, այլ պրակտիկ պատրաստվածությանը, ինչը նրանց հնարավորություն կտա աշխատել ընտանեկան բռնության զոհ դարձած անչափահասների, կանանց, տարեցների, հոգեկան խանգարում ունեցող տուժողների և տուժողների մյուս կատեգորիաների հետ: Միաժամանակ, պետք է մշակվեն ցուցումներ, որոնք նրանց հնարավորություն կտան գրագետ շփում ապահովել ընտանեկան բռնության տարբեր տեսակների ենթարկված անձանց հետ շփման ժամանակ: Օրինակ, հոգեբանական ուսումնասիրությունները վկայում են, որ բռնաբարության զոհ դարձած անձի մոտ հետտրավմատիկ սինդրոմի առաջին փուլում (որը կարող է տևել մի քանի օրից մինչև մի քանի շաբաթ), զոհը փորձում է հերքել կատարվածը, ի վիճակի չէ լիարժեք ներկայացնել կատարվածը: Նման պարագայում ոստիկանության աշխատակցի հոգեբանական պատրաստվածությունը միայն կարող է թույլ տալ զոհից ստանալ ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկատվություն:

Միաժամանակ, իրավապահ մարմնի աշխատակիցների կողմից պետք է ապահովվի ընտանեկան բռնության վերաբերյալ հաղորդումների հստակ գրանցումն ու դրանց ընթացք տալը: Մինչդեռ, ԵԱՀԿ-ի պատվերով կատարված և ստորև ներկայացվող հարցման արդյունքները վկայում են, որ ընտանեկան բռնության ենթարկված, սակայն իրավապահ մարմիններ չդիմած անձանց 15.3%-ը որպես իրավապահ մարմիններին չվստահելու, օգնության համար վերջիններիս չդիմելու պատճառ նշել է այն, որ վերջիններս հորդորել են ընտանիքը չքայքայելու համար համակերպվել բռնարարի հետ:

Բուժքույր Կ.-ն 18 տարեկանում ամուսնացել է Վ.-ի հետ, որից էլ դուստր ունի: Վ.-ն ամուսնությունից որոշ ժամանակ անց սկսում է թմրանյութ գործածել և կորցնում է աշխատանքը, որից հետո սկսում է պարբերաբար ծեծի ենթարկվել կնոջը: Հերթական վիճաբանությունից հետո, երբ կինը գնում է հերթապահության, Վ.-ն գնում է նրա հետևից, աշխատավայրում վիճաբանում նրա հետ, քաշքշում, ապա կնոջը 6-րդ հարկի պատշգամբից ներքև կախում: Կ.-ի գործընկերների միջամտությամբ Կ.-ին կարողանում են ազատել:

Դեպքի կապակցությամբ հայտնում են ոստիկանություն, սակայն վերջիններս հորդորում են Կ.-ին հաշտվել ամուսնու հետ և իրենց դստերը չզրկել հորից: Կատարվածից հետո Կ.-ն տուն չի վերադառնում, այլ, վերցնելով դստերը, հեռանում է ՀՀ-ից:

Հիմնական թերություններից մեկը, որն առկա է ընտանեկան բռնության կանխարգելման առումով, միասնական հստակ վիճակագրության վարման բացակայությունն է, որը հնարավորություն կտա հետևել այս արարքների թեՔ վիճակին, թեՔ կառուցվածքային փոփոխություններին, և թեՔ տուժողների և բռնություն գործադրած անձանց կրիմինոլոգիական բնութագրին: Թեև ՀՀ Ոստիկանությունը վարում է նման վիճակագրություն, սակայն դա վերաբերում է միայն հանցավոր հանդիսացող արարքներին, մինչդեռ ընտանեկան բռնության դրսևորումները չեն սահմանափակվում միայն հանցավոր դեպքերով:

ՀՀ իրավապահ մարմինների, այդ թվում Ոստիկանության համակարգում չի գործում «թեժ գիծ», որը հնարավորություն կտար ընտանեկան բռնության զոհերին արագ տեղեկացնել իրավապահ մարմիներին կատարվող արարքի մասին և անհրաժեշտության դեպքում ցուցումներ ստանալ մինչ ոստիկանության ժամանումը բռնարարի հետ ճիշտ վարքագիծ դրսևորելու առումով:

Ի դեպ, նման գիտելիքները չափազանց կարևորվում են: Ցանկալի կլիներ, որ ոստիկանությունը մշակեր վիկտիմոլոգիական կանխարգելման ցուցումներ, որոնց միջոցով կօգներ ընտանեկան բռնության զոհին նվազագույն

վնասներով լուծել կոնֆլիկտային իրադրությունը: Օրինակ, նման ցուցումները կարող են ներառել այնպիսի հարցեր, ինչպիսին է անձի գտնվելու վայրը ընտանեկան բռնության ժամանակ (օրինակ խուսափել խոհանոցից, մառանից, որտեղ կարող են կտրող-ծակող գործիքներ լինել և բռնություն գործադրողը կարող է իմպուլսիվորեն դրանք օգտագործել զոհի հանդեպ), ընտանեկան բռնության հնարավոր միջադեպի պարագայում տանից արագ հեռանալու համար փաստաթղթերի հավաքումը, առանձին փաթեթով պատրաստումը և այլն:

Կարևոր է ոստիկանության սերտ համագործակցության ապահովումը դպրոցների, ընտանեկան բռնության ենթարկված անձանց օգնություն ցույց տվող հասարակական կազմակերպությունների հետ: Անհրաժեշտ է բնակչության, բնականաբար նաև այդ եղանակով ընտանեկան բռնության հնարավոր զոհերի շրջանում լիարժեք տեղեկատվությամբ տարածումը ինչպես ընտանեկան բռնության դրսևորումների, դրա վտանգավորության, այնպես էլ դրա կանխարգելման վերաբերյալ: Ընտանեկան բռնության ենթարկվող անձը պետք է գիտակցի, որ՝

ա) եթե արդեն տեղի է ունեցել ֆիզիկական բռնության ակտ, ապա որպես կանոն, հաջորդ անգամ մեծանում է դրա կրկնության հաճախականությունը և դաժանության աստիճանը,

բ) բռնությունը և վիրավորանքը սովորաբար ուղեկցվում են ներողություններով և փոխվելու խոստումներով, որոնք սակայն երկար չեն տևում,

գ) հարաբերությունները խզելիս մեծանում է զոհի համար վտանգի աստիճանը:

Առաջարկություններ

Ամփոփելով վերոգրյալը, կարծում ենք, անհրաժեշտ է՝

1. Բնակչության շրջանում իրականացնել տեղեկատվության շարունակական տարածում՝ ընտանեկան բռնության և դրա առանձին դրսևորումների էությունը բացահայտելու, այն կառույցների շրջանակը և դրանց դիմելու կարգը պարզաբանելու նպատակով, որոնց պետք է դիմել ընտանեկան բռնության զոհ դառնալու պարագայում:
2. Բարելավել ՀՀ օրենսդրությունը՝ ընտանեկան բռնության համար պատասխանատվություն սահմանող նորմերի, գործող օրենսդրության մեջ տեղ գտած, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող ձևակերպումների հստակեցման, ընտանեկան բռնության բոլոր դրսևորումների համար պատասխանատվություն սահմանող դրույթների, ընտանեկան բռնության արձագանքման գործուն միջոցների նախատեսման առումով:
3. Նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը, հասարակական կառույցների դերի ամրապնդմանը, ինչը կբարձրացներ վերջիններիս նկատմամբ ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց վստահության մակարդակը, կօժանդակի հասարակական կառույցներին ընտանեկան բռնության կանխարգելման գործում:
4. Զարգացնել սոցիալական աշխատողների ինստիտուտը, որն անմիջականորեն արձագանքելով հասարակության առավել խոցելի խմբերի խնդիրներին, դրանք չեզոքացնելով, կնպաստի ընտանեկան բռնության կանխարգելմանը:
5. Ապահովել սերտ համագործակցություն սոցիալական աշխատողների և ոստիկանության աշխատակիցների միջև՝ ընտանեկան բռնության պայման հանդիսացող գործոնների չեզոքացման ուղղությամբ համատեղ միջոցառումներ իրականացնելու նպատակով:

6. Ընտանեկան բռնության կանխարգելմամբ և դրան արձագանքելով զբաղվող ոստիկանության աշխատակիցների շրջանում ավելացնել իգական սեռի ներկայացուցիչների թվաքանակը, հատկապես ուշադրություն դարձնելով մարզային ստորաբաժանումներում վերջիններիս ներկայացուցչությանը:
7. Ոստիկանության աշխատակիցների շրջանում անցկացնել հատուկ հոգեբանական պատրաստվածության դասընթացներ, թրեյնինգներ՝ ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց հետ գրագետ շփվելու կարողություն ձևավորելու, զարգացնելու համար, ընտանեկան բռնության զոհին առաջնային հոգեբանական աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվության ստացումը ապահովելու նպատակով:
8. Բնակչության շրջանում տարածել պրոֆեսիոնալների (ոստիկաններ, կրիմինոլոգներ և այլն) կողմից մշակված գրագետ տեղեկատվություն՝ ընտանեկան բռնության դեպքերի ժամանակ ճիշտ վարքագիծ դրսևորելու, ընտանեկան բռնության կանխարգելման նպատակով:

ՄԱՍ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄ

ՄԱՍ 2.1. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարցում

Ընտանեկան բռնությունից բնակչության շրջանում ընտանեկան բռնության գնահատմանն ուղղված հարցումների իրականացումը և դրանց արդյունքում ստացված տվյալներն այլընտրանքային արժեքավոր աղբյուր են ընտանեկան բռնության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության հետ համադրման առումով:

Ընտանեկան բռնության վերաբերյալ ՀՀ բնակչության շրջանում իրականացվող ուսումնասիրության՝ պիլոտային հարցման, բուն հարցման, տվյալների ստացման, համակարգչային համակարգ դրանց մուտքագրման, համակարգչային մշակման, արդյունքների վերլուծության և տվյալների գրաֆիկական ու աղյուսակային ներկայացման մեթոդաբանության մշակումը իրականացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ սերտ համագործակցության պայմաններում:

Քննարկումների արդյունքում ամրագրվեցին հետևյալ մեթոդաբանական մոտեցումները՝

- Անմիջական հարցումների իրականացում ՀՀ չորս մարզերի և Երևան քաղաքի 2695 բնակիչների շրջանում: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, հարցման մեջ ընդգրկվել են յուրաքանչյուր մարզի երկու քաղաքների և երկու գյուղերի բնակիչներ: Երևան քաղաքում հարցման են ենթարկվել ներկայացուցիչներ բոլոր համայնքներից:

– Մանրակրկիտ մշակման է ենթարկվել ուսումնասիրության մեթոդաբանությունը՝ թե՛ հարցման արդյունավետությունը, թե՛ դրա արդյունքում ստացված տվյալների ներկայացումն առավելագույնս ապահովելու համար:

Հարցումն իրականացվել է անմիջական հարցման մեթոդով՝ հարցումների իրականացման համար ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ համատեղ նախապես մշակված հարցաթերթիկով: ՀՀ ողջ տարածքում հարցման մեջ ընդգրկվել են 14-ից բարձր տարիքային խմբերի 2695 ներկայացուցիչներ:

Հարցման հիմնական նպատակներն են՝

– բացահայտել ընտանեկան բռնության տարածվածությունն ու դրանից բնակչության տուժելու իրական մասշտաբները,
– գնահատել ընտանեկան բռնության դրսևորման օրինաչափությունները,
– բացահայտել ընտանեկան բռնության կանխարգելման առումով ոստիկանության գործունեության արդյունավետության վերաբերյալ հասարակական դիրքորոշումը,
– բացահայտել այն գործոնները, որոնք հանգեցնում են բնակչության շրջանում ընտանեկան բռնության,
– հստակեցնել այն հնարավոր փոփոխությունները, որոնք հրատապ կերպով պետք է տեղ գտնեն հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում՝ պետական մարմինների գործունեության մեջ՝ ընտանեկան բռնության կանխարգելման առումով:

Հարցումն իրականացվել է Երևան քաղաքի բոլոր համայնքներում և ՀՀ չորս մարզերում: Նկատի ունենալով մարզերի, ինչպես նաև Երևան քաղաքի համայնքների բնակչության խտության տարբերությունը՝ հարցման ենթարկվողների (ընտրանքի) քանակը նույնական չէ ըստ մարզերի և Երևան քաղաքի համայնքների: Հարցման ենթարկվածների թվաքանակի բաշխումը ներկայացված է աղյուսակ 1-ում՝

Աղյուսակ 1. Հարցման ենթարկվածների բաշխումն ըստ ՀՀ մարզերի

	Մարզ	Բնակչության թիվ	Հարցման ընտրանք (ըստ ծրագրի)	Փաստացի հարցման ենթարկվածներ
1	Արագածոտն	141 000	212	316
2	Արմավիր	283 000	320	361
3	Լոռի	281 800	300	353
4	Շիրակ	281 100	308	324
5	Երևան	1 103 500	1250	1341
	Ընդամենը	2090400	2390	2695

Հարցումն իրականացվել է յուրաքանչյուր ընտրված մարզի երկու քաղաքներում և երկու գյուղերում: Հարցման ենթարկվածների բաշխումն ըստ մարզերի քաղաքային և գյուղական վայրերի ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2. Հարցման ենթարկվածների բաշխումն ըստ ՀՀ մարզերի գյուղական և քաղաքային վայրերի

	Մարզ	Քաղաք			Գյուղ		
1	Արագածոտն	Աշտարակ	Թալին	211	Ծաղկահովիտ	Կոշ	105
2	Արմավիր	Էջմիածին	Արմավիր	250	Թաիրով	Փարաքար	111
3	Լոռի	Վանաձոր	Ստեփանավան	223	Գյուլագարակ	Կուռթան	131
4	Շիրակ	Արթիկ	Գյումրի	210	Աշոցք	Ամասիա	114
	Ընդամենը			**894**			**461**

Աղյուսակ 3. Հարցման ենթարկվածների բաշխումն ըստ Երևան քաղաքի համայնքների:

	Համայնք	Բնակչության թիվ	Փաստացի հարցման ենթարկվածներ
1	Աջափնյակ	106 700	112
2	Արաբկիր	50 118	111
3	Ավան	132 500	103
4	Չարբախ	40 600	101
5	Էրեբունի	119 200	116
6	Կենտրոն	130 800	138
7	Մալաթիա-Սեբաստիա	142 400	115
8	Նորք Մարաշ	11 970	98
9	Նոր Նորք	141 900	130
10	Նուբարաշեն	9 200	95
11	Շենգավիթ	140 400	123
12	Զեյթուն	77 700	99
	Ընդամենը	**1 103 500**	**1341**

Հարցման արժանահավատությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով հարցում իրականացնողների հետ (6 հաստիքային և 8 կամավորական հարցում իրականացնողներ) անց են կացվել վարժանքներ, որոնց ժամանակ վերջիններիս բացատրվել են հարցման խնդիրները, հարցման անցկացման սկզբունքները, մեթոդները, հարցման անանուն բնույթի կարևորությունը:

Միաժամանակ, ուսումնասիրության ողջ ընթացքը հաջողությամբ ավարտին հասցնելու նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

1. Նախապատրաստական ցուցումներ, որոնց նպատակն էր հարցում իրականացնողներին հստակ բացատրել իրենց կողմից տրվող հարցերից յուրաքանչյուրի կարևորությունը, հարցաթերթիկի լրացման կարգը, հարցման ընթացակարգը: Մինչ բուն հարցման իրականացումը կատարվել է պիլոտային հարցում, որի ժամանակ ծագած խնդիրներն

էլ հաշվի են առնվել թե՛ հարցաթերթիկը լրամշակելիս, թե՛ հարցման հետագա ընթացքի ժամանակ:

2. Ծրագրի ղեկավարի կողմից պարբերաբար այցեր են կատարվել հարցում իրականացնողների կողմից հարցման իրականացման վայրեր՝ ստուգելու համար վերջիններիս կողմից իրենց պարտականությունների կատարման արժանահավատությունը:
3. Յուրաքանչյուր մարզում հարցումն ավարտելուց հետո կոնկրետ մարզում ծագած դժվարությունները քննարկվել են ՀԿ-ում՝ հարցման հետագա իրականացման ընթացքում դրանցից հնարավորինս խուսափելու, առկա խոչընդոտները վերացնելու նպատակով:

Հարցման ենթարկվածների ընդհանուր բնութագիրը

Հարցման ընթացքում հարցման են ենթարկվել 2695 անձինք:

Ստացված տվյալները դասակարգվել են ըստ հետևյալ բնութագրերի՝

- սեռ
- տարիք
- կրթական մակարդակ
- ընտանեկան դրություն
- զբաղվածություն
- գյուղական, քաղաքային բնակչություն

Սեռ

Ընտանեկան բռնության տարածվածության գնահատման նպատակով բնակչության շրջանում անցկացված հարցման արդյունքների վերլուծությամբ պարզ դարձավ, որ պատահական ընտրանքի արդյունքում հարցման ենթարկվածների 41.7% -ը տղամարդիկ էին, իսկ 58.3.% -ը՝ կանայք: Ընդհանուր առմամբ, կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը ըստ մարզերի նույն օրինաչափությունն էր դրսևորում, բացառությամբ Արագածոտնի մարզի, որտեղ հարցման ենթարկված տղամարդկանց թվաքանակը ոչ էականորեն գերազանցում էր կանանց թվաքանակը:

Գրաֆիկ 1. Հարցման ենթարկվածների սեռային բաշխումը՝ ըստ ՀՀ մարզերի:



Երևան քաղաքի համայնքներում, սակայն, նկատվում է կանանց թվային գերակշռություն: Միայն Զեյթուն, Նոր Նորք և Նորք Մարաշ համայնքներում է հարցման ընտրանքում ընդգրկված տղամարդկանց թվաքանակը գերազանցում կանանց ցուցանիշը:

Գրաֆիկ 2. Հարցման ենթարկվածների սեռային բաշխումը՝ ըստ Երևան քաղաքի համայնքների:



Տարիք

Հարցման ենթարկվածների միջին տարիքը 41 է: Հարցման ենթարկված ամենաերիտասարդ անձը եղել է 14, ամենատարեցը՝ 79 տարեկան:

Գրաֆիկ 3. Հարցման ենթարկվածների տարիքային բաշխվածությունը:



Հարցման ենթարկվածների տարիքային բաշխման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տոկոսային հարաբերակցությամբ և՛ Երևան քաղաքի համայնքներում և՛ ՀՀ մարզերում հարցման ենթարկվածների ամենամեծ խումբը կազմել են 18-30 տարիքային խմբերի ներկայացուցիչները: Հարցման ենթարկվածների ամենափոքր խումբը ընդգրկել է 61-ից բարձր տարիքային խմբի ներկայացուցիչներին:

Աղյուսակ 4. Հարցվածների տարիքային բաշխվածությունը՝ ըստ մարզերի:

Մարզ	Տարիքային խումբ						
	14-17	18 -25	26-30	31 - 40	41 - 50	51-60	61+
Երևան	10.3%	21%	20.1%	17.4%	14.6%	12.2%	4.4%
Արագածոտն	11%	20.7%	16.1%	13.8%	16.1%	15.4%	5.9%
Արմավիր	5.2%	25.3%	15.4%	16.9%	15.5%	15.5%	6.2%
Լոռի	9.5%	16.7%	14.6%	18.1%	16.2%	17.2%	7.7%
Շիրակ	10.9%	19.7%	21.1%	14%	17.6%	13.2%	4.5%

Աղյուսակ 5. Հարցվածների տարիքային բաշխվածությունը՝ ըստ Երևան քաղաքի համայնքների:

Մարզ	Տարիքային խումբ						
	14-17	18 -25	26-30	31 - 40	41 - 50	51 - 60	61+
Աջափնյակ	11.1%	19.8%	25.6%	16.7%	10.1%	11.3%	5.4%
Ավան	9.7%	20.7%	16.7%	18.1%	15.4%	15.4%	4%
Արաբկիր	11%	21%	18.8%	15%	15.8%	13.4%	5%
Չարբախ	10.4%	26.1%	19.4%	14.4%	13.1%	12.3%	4.3%
Էրեբունի	9.8%	23%	20.6%	16.9%	12.4%	11.7%	5.6%
Կենտրոն	10.6%	17.2%	18.1%	18.8%	14.3%	15.3%	5.7%
Մալաթիա-Սեբաստիա	9.9%	17.7%	19.9%	17.8%	16.8%	12.9%	5%
Նորք Մարաշ	12.9%	20.6%	21.4%	11.6%	17.8%	7.8%	4.9%
Նոր Նորք	12.4%	21.4%	19.6%	13.9%	18.6%	9.7%	4.4%
Նուբարաշեն	9.7%	20.6%	21.8%	14.7%	17.4%	11.7%	4.1%
Շենգավիթ	10.9%	23.1%	18.9%	20.9%	12.3%	10.4%	3.5%
Զեյթուն	10.5%	20.7%	21.5%	18.5%	10.5%	12.5%	5.8%

Կրթական մակարդակ

Հարցման ենթարկվածների կրթական մակարդակի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նրանց մեծամասնությունը բարձրագույն կրթությամբ անձիք էին՝ 40.5%:

Գրաֆիկ 4. Հարցվածների բաշխումը՝ ըստ կրթական մակարդակի:



ՀՀ բոլոր մարզերում էլ հարցման ենթարկվածների շրջանում գերակշռողը բարձրագույն կրթություն ունեցող անձինք էին: Ինչ վերաբերում է Երևան քաղաքի վարչական միավորներին, ապա կրկին հարցման ընտրանքում գերակայում էր բարձրագույն կրթությամբ հարցվածների թիվը. բացառություն էին կազմում միայն Շենգավիթ և Չարբախ համայնքները, որտեղ, հարցման արդյունքների համաձայն, գերակշռում էին միջնակարգ կրթություն ունեցող անձինք:

Աղյուսակ 6. Հարցվածների կրթական խմբերի բաշխվածությունը՝ ըստ մարզերի:

Մարզ	**Կրթություն**					
	չունի	**8-ամյա**	**միջնակարգ**	**միջնակարգ-մասնագիտական**	**թերի բարձրագույն**	**բարձրագույն**
Երևան	1.6%	2.3%	22.9%	14%	18.1%	41.1%

Արագածոտն	1.3%	8.7%	30.8%	15.4%	6%	37.8%
Արմավիր	2.8%	3.5%	24%	11.2%	14%	44.5%
Լոռի	4.9%	7.7%	27.5%	9.8%	14.6%	35.5%
Շիրակ	2.2%	1.5%	27.8%	13.3%	14.1%	41.4%

Աղյուսակ 7. Հարցվածների կրթական խմբերի բաշխվածությունը՝ ըստ Երևանի համայնքների:

Մարզ	**Կրթություն**					
	չունի	**8-ամյա**	**միջնակարգ**	**միջնակարգ-մասնագիտական**	**թերի բարձրագույն**	**բարձրագույն**
Աջափնյակ	0%	2.9%	24.3%	10.6%	18%	44.2%
Ավան	1.8%	5.9%	38.5%	7.7%	7.7%	38.4%
Արաբկիր	0%	2.1%	32.2%	8.2%	26.4%	31.1%
Չարբախ	4%	4.3%	33.4%	20.8%	16.7%	20.8%
Էրեբունի	3.3%	0%	23.9%	30%	20.8%	22%
Կենտրոն	0%	1.9%	23.8%	10.5%	30.2%	33.6%
Մալաթիա-Սեբաստիա	2%	4%	21.1%	23.2%	15.3%	34.4%
Նորք Մարաշ	0%	2%	21.8%	2%	27.5%	46.7%
Նոր Նորք	5.5%	6%	24.4%	12.9%	7.2%	44%
Նուբարաշեն	0%	2.9%	15.9%	31.2%	17.6%	32.4%
Շենգավիթ	0%	5.3%	36.3%	15.8%	12.3%	30.3%
Զեյթուն	0%	0%	25%	10%	31.3%	33.7%

Ընտանեկան դրություն

Հարցման ենթարկվածների մեծ մասը ամուսնացած էր (55%), մինչդեռ ամուսնալուծվածները և այրիները շատ փոքր տոկոսային ներկայացուցչություն ունեին:

Գրաֆիկ 5. Հարցման ենթարկվածների բաշխումը՝ ըստ ընտանեկան դրության:



Ամուսնացածները ՀՀ բոլոր մարզերում էլ տոկոսային հարաբերակցությամբ գերակշռում էին մյուս խմբերի ներկայացուցիչներին: Նմանատիպ վիճակ է նաև Երևան քաղաքի համայնքներում, բացառությամբ Կենտրոն և Զեյթուն համայնքների, որտեղ ամուրիների թիվը գերազանցում է ամուսնացածների թվաքանակին:

Աղյուսակ 8. Հարցվածների ընտանեկան դրության վիճակը՝ ըստ մարզերի:

Մարզ	Ընտանեկան դրություն			
	Ամուրի	*Ամուսնացած*	*Ամուսնալուծված*	Այրի
Երևան	39.7%	52.5%	4.3%	3.5%
Արագածոտն	35.1%	51.4%	5.4%	8.1%
Արմավիր	36.6%	58.5%	2.1%	2.8%
Լոռի	25.2%	60.8%	7%	7%
Շիրակ	29.1%	59.5%	7.6%	3.8

Աղյուսակ 9. Հարցվածների ընտանեկան դրության բաշխվածությունը՝ ըստ Երևանի համայնքների:

Մարզ	Ընտանեկան դրություն			
	Ամուրի	*Ամուսնացած*	*Ամուսնալուծված*	*Այրի*
Աջափնյակ	44.4%	44.5%	2.8%	8.3%
Ավան	39%	56.2%	3.2%	1.6%
Արաբկիր	44.0%	46%	8%	2%
Չարբախ	41.7%	55.2%	3.1%	0%
Էրեբունի	45.6%	45.5%	6.1%	2.7%
Կենտրոն	58%	36%	2%	4%
Մալաթիա-Սեբաստիա	35.4%	57.6%	3%	4%
Նորք Մարաշ	23.4%	68.1%	8.5%	0%
Նոր Նորք	29%	65.2%	4.3%	1.5%
Նուբարաշեն	26.5%	68.6%	2%	2.9%
Շենգավիթ	41.1%	46.4%	5.4%	7.1%
Զեյթուն	52.1%	45.4%	2.5%	0%

Զբաղվածություն

Հարցվածների 53.2%-ը նշեց, որ ունի աշխատանք. մնացածները կամ սովորում էին և չէին աշխատում, կամ էլ գտնվում էին գործազուրկի կամ թոշակառուի կարգավիճակում:

Գրաֆիկ 6. Հարցվածների խմբային բաշխումը՝ ըստ զբաղվածության:



ՀՀ մարզերում, ինչպես նաև Երևանի համայնքներում հարցման ենթարկվածների տոկոսային հարաբերակցությունը ըստ զբաղվածության ցուցանիշի ներկայացված է ստորև բերված գրաֆիկական պատկերներ 7 և 8-ում՝

Գրաֆիկ 7. Հարցվածների հարաբերակցությունը՝ ըստ զբաղվածության ՀՀ մարզերում:



Գրաֆիկ 8. Հարցվածների հարաբերակցությունը ըստ զբաղվածության Երևանի համայնքներում:



Գրաֆիկական պատկերներից պարզորոշ երևում է, որ թե՛ Երևան քաղաքի համայնքներում, թե՛ մարզերում հարցվածների շրջանում գերակշռում են աշխատանքով ապահովված անձինք:

Քաղաքային և գյուղական բնակչություն

ՀՀ մարզերում հարցվածների 29%-ը բնակվում էր գյուղական համայնքներում, իսկ 71%-ը՝ քաղաքներում: Ըստ մարզերի՝ այդ հարաբերակցությունը ներկայացված է ստորև բերված գրաֆիկական պատկերում՝

Գրաֆիկ 9. ՀՀ մարզերում հարցվածների հարաբերակցությունը՝ ըստ գյուղական/քաղաքային վայրերի:



ՄԱՍ 2.2. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Հարցման արդյունքների վերլուծությունը ՀՀ կտրվածքով

Ընտանեկան բռնության վիճակի ճիշտ գնահատման կարևորագույն պայմաններից մեկը հասարակության անդամների կողմից այդ հասկացության սահմանների ընկալման պարզաբանումն է: Այդ նպատակով, հարցվողներին առաջարկվեց պատասխանել այն հարցին, թե իրենք ի՞նչ են հասկանում ընտանեկան բռնության ներքո: Հարցվողներին առաջարկվեց ընտրություն կատարել 5 հնարավոր պատասխաններից, ընդ որում, նրանց հնարավորություն ընձեռվեց նշել մի քանի ճիշտ պատասխան: Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ՀՀ-ում հարցվածների 38%-ի կարծիքով միայն ծեծելն ու մարմնական վնասի պատճառումը, այսինքն՝ ֆիզիկական բռնության դրսևորումներն են հանդիսանում ընտանեկան բռնություն: Հարցվածների 14.3%-ի կարծիքով ֆիզիկական բռնության հետ մեկտեղ ընտանեկան բռնության տարատեսակ է նաև հոգեկան բռնությունը՝ վախեցնելը, սպառնալիքը, հարցվածների 25.7%-ը նախորդ խմբերին ավելացրեց նաև սեքսուալ բռնությունը, 18.4%-ը ֆիզիկական, սեքսուալ և հոգեկան բռնության հետ մեկտեղ նշեց ընտանիքի չափահաս անդամների ազատ տեղաշարժման իրավունքի խստիվ վերահսկումը և միայն 3.3%-ը բացի վերը թվարկված խմբերից նշեց ընտանիքի չափահաս անդամի ֆինանսական միջոցների խստիվ վերահսկումը:

Ըստ ուսումնասիրության մեջ ընդգրկված չորս մարզերի և Երևան քաղաքի, ընտանեկան բռնության տարատեսակների վերաբերյալ մոտեցումները ներկայացված են գրաֆիկական պատկեր 10-ում՝

Գրաֆիկ 10. Ներքոշարադրյալներից ո՞րն է ըստ Ձեզ հանդիսանում ընտանեկան բռնություն՝ ըստ մարզերի:



Ակնհայտ է, որ բնակչության շրջանում արմատապես առկա է այն համոզմունքը, որ ծեծը, մարմնական վնաս պատճառելը հանդիսանում են ընտանեկան բռնության տարատեսակ: Այլ խնդիր է, որ հարցվածների միայն շուրջ 20%-ն է որպես այդպիսին համարում նաև հոգեկան հարկադրանքը, իսկ շուրջ 5%-ը՝ ֆինանսական միջոցների վերահսկումը: Ընտանեկան բռնության ընկալման վերաբերյալ ամենավատթար ցուցանիշները ստացվել են Արագածոտնի մարզից, որտեղ հարցվածների դեռևս 50%-ից ավելիի համար ընտանեկան բռնությունը նույնացվում է զուտ ֆիզիկական բռնության հետ:

Թերևս դրանով էլ կարելի է բացատրել այն, որ ուսումնասիրության շրջանակում ընդգրկված մարզերից միայն Արագածոտնի մարզի բնակիչների մեծամասնության՝ 61.1%-ի կարծիքով, ընտանեկան բռնությունը տարածված չէ: Մինչդեռ, պատասխանելով այն հարցին, թե Ձեր կարծիքով ՀՀ-ում ընտանեկան բռնությունը տարածվա՞ծ է, հարցվածների ընդհանուր զանգվածի 55.5%-ը նշեց, որ այն տարածում է ստացել:

Գրաֆիկ 11. Ձեր կարծիքով ՀՀ-ում ընտանեկան բռնությունը տարածվա՞ծ է :



Գրաֆիկ 12. Ձեր կարծիքով ՀՀ-ում ընտանեկան բռնությունը տարածվա՞ծ է՝ ըստ մարզերի:



Ընդ որում, հարցվածների 64.6%-ը նշել է, որ իրենց ընկալմամբ վերջին 3 տարվա ընթացքում ընտանեկան բռնությունն աճել է և միայն 19.8%-ն է կարծել, որ ընտանեկան բռնությունը նվազել է: Ընտանեկան բռնության աճի զգացողությունը խիստ ընդգծված է եղել հատկապես Լոռվա և Արմավիրի մարզերում՝ համապատասխանաբար 63.2% և 59.6%:

Գրաֆիկ 13. Ձեր կարծիքով վերջին 3 տարվա ընթացքում ՀՀ-ում ընտանեկան բռնությունն աճել է, թե՞ նվազել՝ ըստ մարզերի:



Այն հարցին պատասխանելիս, թե որտե՞ղ է առավել տարածված ընտանեկան բռնությունը, հարցվածների պատասխանները բաշխվել են գրեթե համամասնորեն. հարցման շրջանակում ընդգրկվածների 49.9%-ը նշել է քաղաքում, 49.9%-ը՝ գյուղում տարբերակը:

Գրաֆիկ 14. Ձեր կարծիքով որտե՞ղ է առավել տարածված ընտանեկան բռնությունը՝ ըստ մարզերի:



Ընդհանուր համամասնությունից շեղում գրանցվել է Շիրակի և Արմավիրի մարզերում. Շիրակի մարզում գերակշռում է այն անձանց թիվը (61.7%), ովքեր կարծում են, որ ընտանեկան բռնությունը առավել տարածված է քաղաքներում, մինչդեռ բևեռայնորեն հակառակ տեսակետի կողմնակից են Արմավիրի մարզի բնակիչները, ում 69.5%-ի կարծիքով ընտանեկան բռնությունը առավել տարածված է գյուղական վայրերում:

Փորձելով պարզել բնակչության շրջանում ընտանեկան բռնության տարածման մակարդակը, հարցվածներին առաջարկվեց պատասխանել այն հարցերին, թե երբևէ իրենց կյանքի ընթացքում կամ վերջին երկու տարվա ընթացքում իրենք դարձել են արդյո՞ք ընտանեկան բռնության զոհ:

Ստացված պատասխանների վերլուծությունը ցույց տվեց, որ հարցվածների 59.6%-ը իրենց կյանքի ընթացքում դարձել են ընտանեկան բռնության զոհ, ընդ որում՝ 38.4%-ը՝ վերջին երկու տարվա ընթացքում:

Ըստ ուսումնասիրության շրջանակներում ընդգրկված մարզերի, ընտանեկան բռնության դեպքերի բաշխումը ներկայացված է գրաֆիկական պատկերներ 15 և 16-ում:

Գրաֆիկ 15. Երբևէ ընտանեկան բռնության զոհ դառնալը՝ ըստ մարզերի:



Գրաֆիկ 16. Վերջին 2 տարվա ընթացքում ընտանեկան բռնության զոհ դառնալը՝ ըստ մարզերի:



Ինչպես տեսնում ենք, ընտանեկան բռնության զոհի կարգավիճակում հայտնվելու վերաբերյալ առավել հաճախ նշել են Լոռի, Արմավիր և Շիրակ մարզերում հարցման ենթարկվածները, մինչդեռ նվազագույն արձագանքներ ստացվել են Արագածոտնի մարզից: Նման բաշման պատճառը, թերևս, ընտանեկան բռնության տարատեսակների ընկալման տարբերակումն է. Արագածոտնի մարզում հարցվածների 50%-ից ավելիի կարծիքով ընտանեկան բռնությունը նույնանում է սոսկ ֆիզիկական կամ սեքսուալ բռնության հետ, ուստի և հասկանալի է, որ հոգեբանական կամ տնտեսական բռնության ենթարկված անձանցից շատերը չեն դիտարկում իրենց հանդեպ կատարվածը որպես ընտանեկան բռնություն:

Մինչդեռ հարցվածների կողմից ստացված պատասխանների վերլուծությունը վկայում է, որ ընտանեկան բռնության տարատեսակներից առավել տարածվածը ֆիզիկական և հոգեբանական բռնությունն է: Այն հարցին, թե ընտանիքի անդամի կողմից Ձեր հանդեպ ներքոշարադրյալներից երբևէ ի՞նչ է կիրառվել, հարցվածների 34.8%-ը նշել է «ծեծ կամ մարմնական վնասի պատճառում», 44.8%-ը ընտրել է «սպառնալիք, ահաբեկում» տարբերակը, 5.6%-ի հաղորդմամբ իրենք դարձել են սեռական բռնության զոհ,

15.1%-ը նշել է ֆինանսական միջոցների, իսկ 16%-ը ազատ տեղաշարժման խստիվ վերահսկումը:

Հարկ է նշել, որ թյուր է այն պատկերացումը, որ ընտանեկան բռնության զոհ դառնում են սոսկ կանայք: Հարցման արդյունքների վերլուծությունը վկայում է, որ հարցված տղամարդկանց 11.9%-ը նույնպես կյանքի ընթացքում եղել են ընտանեկան բռնության զոհեր: Այլ հարց է, որ եթե ընտանեկան բռնության զոհ դարձած իգական սեռի ներկայացուցիչների մեծամասնությունը բռնության է ենթարկվել ամուսնու, զուգընկերոջ կամ սկեսուր/սկեսրայրի կողմից, ապա տղամարդկանց ճնշող մեծամասնությունը՝ ծնողների, եղբոր կամ զավակների կողմից:

Գրաֆիկ 17. Ո՞ւմ կողմից է կիրառվել բռնությունը՝ ըստ սեռի:



Նկատի ունենալով այն, որ ընտանեկան բռնության զոհի կարգավիճակում կանայք ավելի հաճախ են հայտնվում, քան տղամարդիկ, օրինաչափ պետք է դիտել այն, որ պատասխանելով այն հարցին, թե «Ու՞մ

կողմից է կիրառվել բռնությունը», ընտանեկան զոհ դարձած անձանց 61.4%-ը պատասխանել է, որ ոտնձգություն իրականացվել է ամուսնու կողմից:

Գրաֆիկ 18. Ո՞ւմ կողմից է կիրառվել բռնությունը:



Գրաֆիկ 19. Ո՞ւմ կողմից է կիրառվել բռնությունը՝ ըստ մարզերի:



Այն հարցին, թե ընտանեկան բռնության ենթարկվելուց հետո երբևէ հեռացել եք տանից, դրական են պատասխանել ընտանեկան բռնության զոհերի միայն 35.8%-ը: Ընդ որում, բռնության ենթարկվելուց հետո տանից հեռանալու վերաբերյալ հաղորդումների ամենացածր տոկոսը գրանցվել է Արմավիր և Արագածոտն մարզերում՝ համապատասխանաբար 13.2% և 30.8%: Ըստ մարզերի բաշխումը ներկայացված է գրաֆիկ 20-ում՝

Գրաֆիկ 20. Ընտանեկան բռնության ենթարկվելուց հետո երբևէ հեռացե՞լ եք տանից՝ ըստ մարզերի:



Ընտանեկան բռնության զոհ դարձած այն անձինք, ովքեր նշել էին, որ տանից չեն հեռացել, որպես նման վարքագծի պատճառ առավելապես նշել էին, որ հույս ունեին, որ բռնությունը շուտով կավարտվի, բռնարարը կուղղվի: Նման պատասխան էին տվել հարցման մեջ ընդգրկված անձանց 36.7%-ը: Բռնության ենթարկված անձանց 29.4%-ը որպես տանից չհեռանալու պատճառ նշել էին նաև վախը հասարակության բացասական արձագանքից, իսկ 18.8%-ը նշել էին գնալու տեղ չունենալը, հատկապես երեխաների առկայության պարագայում:

Ընդ որում, տանից չհեռանալու շարժառիթների բաշխումը գրեթե նույն համամասնությամբ պահպանվում է նաև ՀՀ մարզերում. հասարակության բացասական գնահատականին արժանանալու վախն առավել արտահայտված է Շիրակ, Արմավիր և Արագածոտն մարզերում՝ համապատասխանաբար 44.1%, 46.3% և 39.3%:

Գրաֆիկ 21. Ընտանեկան բռնության ենթարկվելուց հետո տանից չհեռանալու պատճառը:



Գրաֆիկ 22. Ընտանեկան բռնության ենթարկվելուց հետո տանից չհեռանալու պատճառը՝ ըստ մարզերի:



Պարզելու համար, թե որքանով է կարևորվում կացարանի, ֆինանսական անկախության դերը ընտանեկան բռնություն գործադրող անձից հեռանալու որոշման կայացման հարցում, ընտանեկան բռնության ենթարկված հարցվողներին առաջարկվեց պատասխանել, թե «եթե բնակարան և ֆինանսական անկախություն ունենայիք, կլքեի՞ք Ձեր հանդեպ բռնություն գործադրած անձին»: Դրական պատասխան տրվեց հարցման շրջանակում ընդգրկված, ընտանեկան բռնության ենթարկված անձանց 65.7%-ի կողմից: Ըստ մարզերի բաշխումը ներկայացված է գրաֆիկ 21-ում՝

Գրաֆիկ 23. Եթե բնակարան և ֆինանսական անկախություն ունենայիք, կլքեի՞ք Ձեր հանդեպ բռնություն գործադրած անձին՝ ըստ մարզերի:



Թեև շատերի կողմից ընդունում ստացած մոտեցումներից մեկն այն է, որ ընտանեկան բռնություն գործադրվում է, որպես կանոն, ալկոհոլային կամ թմրանյութային հարբածության վիճակում գտնվող անձանց կողմից, այնուհանդերձ անցկացված հարցման արդյունքները վկայում են, որ թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ են գտնվել ընտանեկան բռնություն գործադրած անձանց միայն 36.5%-ը: Այս համամասնությունը

պահպանվում է նաև մարզերում. միայն Շիրակի մարզում հարցման ենթարկված և ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց 42.9%-ն են նշել, որ բռնության գործադրման ժամանակ ոտնձգողը գտնվել է թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ: Ըստ մարզերի պատասխանների բաշխումը պատկերված է գրաֆիկ 24-ում՝

Գրաֆիկ 24. Բռնություն գործադրելիս բռնարարը եղե՞լ է արդյոք թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ՝ ըստ մարզերի:



Ցանկացած ոտնձգության, այդ թվում նաև ընտանեկան բռնության դրսևորման կանխարգելման և դրա նկատմամբ հսկողության սահմանման կարևորագույն նախադրյալներից մեկ զոհի վարքագծի ուսումնասիրումն է ոտնձգության ընթացքում և դրանից հետո: Ուստի, ոտնձգության ընտանեկան բռնության ենթարկված անձանց առաջարկվեց պարզաբանել, թե ի՞նչ են իրենք արել բռնությունը դադարեցնելու համար: Ընտանեկան բռնության ենթարկված հարցվածների 45.1%-ը նշեց, որ դրսևորել է պասիվ վարքագիծ և ոչինչ չի արել: Իրավապահ մարմիններ են դիմել այդ անձանց միայն 6.8%-ը:

Գրաֆիկ 25. Ի՞նչ եք արել բռնությունը դադարեցնելու համար:



ՀՀ մարզերում ևս մեծամասնություն էին կազմում նրանք, ովքեր դրսևորել են պասիվ վարքագիծ կամ առավելագույնը՝ դիմել էին բարեկամների օգնությանը:

Գրաֆիկ 26. Ի՞նչ եք արել բռնությունը դադարեցնելու համար՝ ըստ մարզերի:



Այն հարցին, թե ինչու՞ ընտանեկան բռնության ենթարկվածը չի դիմել իրավապահ մարմիններին, ստացվել են հետևյալ պատասխանները՝

Գրաֆիկ 27. Եթե իրավապահ մարմիններ չեք դիմել, ապա ի՞նչն է դրա պատճառը:



Գրաֆիկ 28. Եթե իրավապահ մարմիններ չեք դիմել, ապա ի՞նչն է դրա պատճառը՝ ըստ մարզերի:



Ընտանեկան բռնության ենթարկված, սակայն իրավապահ մարմիններ չդիմած անձանց պատասխանների վերլուծությունը վկայում է, որ վերջիններիս չդիմելու հիմնական պատճառը (41.6%-ի համար) հարազատին (թեկուզև բռնարար) քրեական պատասխանատվության ենթարկվելու վտանգից զերծ պահելն է: Ընտանեկան բռնության ենթարկված, սակայն իրավապահ մարմիններ չդիմած անձանց 21.9%-ի կողմից նշվեց կատարված արարքից և դրա հրապարակումից ամաչելը, իսկ 20.2%-ը նշեց քաշքշուկից խուսափելու ցանկությունը:

Հարցվածների պատասխանների բաշխումը որոշակիորեն տարբերակվում է ըստ սեռի դրանք վերլուծելիս: Մասնավորապես,

տղամարդկանց ավելի մեծ խումբն է խուսափում իրավապահ մարմիններ դիմելուց ելնելով այն հանգամանքից, որ բռնությունը գործադրվել է հարազատի կողմից: Այնուհանդերձ, տղամարդիկ առավել իրատես են և նրանց շրջանում գրեթե չի արտահայտվել տեսակետ, որ իրավապահ մարմիններ չդիմելու շարժառիթ է եղել այն հույսը, որ բռնություն գործադրողը կուղղվի, և ոտնձգությունը կավարտվի:

Գրաֆիկ 29. Եթե իրավապահ մարմիններ չեք դիմել, ապա ի՞նչն է դրա պատճառը՝ ըստ սեռի:



Պարզելու համար, թե ի՞նչն էր ընտանեկան բռնության զոհերի կողմից իրավապահ մարմիններին, մասնավորապես ոստիկանությանը չդիմելու պատճառը, հարցվողներին առաջարկվեց արտահայտել իրենց դիրքորոշումը այդ կապակցությամբ, ինչն էլ ներկայացված է ստորև բերված աղյուսակ 10-ում՝

Աղյուսակ 10. Եթե ընտանեկան բռնության ենթարկվելիս չեք վստահում ոստիկանությանը, ապա ի՞նչն է դրա պատճառը՝

ոստիկանության կոռումպացվածությունը	11.2%
ոստիկանությունը բավարար նյութատեխնիկական հնարավորություններ չունի ինձ օգնելու համար	3.9%
նրանք հորդորում են ընտանիքը չքայքայելու համար համակերպվել	15.3%
անտարբեր վերաբերմունք են դրսևորում	40.3%
ոստիկանությունում ընտանեկան բռնության հարցերով զբաղվում են մյուս սեռի ներկայացուցիչները, և ես ինձ հարմարավետ չեմ զգում նրանց ինձ հետ տեղի ունեցածը պատմել	5.3%
կատարվածի վերաբերյալ իրեղեն ապացույցներ չունեմ	2.6%
ոստիկանության աշխատակիցները տարրական հոգեբանական պատրաստվածություն չունեն ընտանեկան բռնության ենթարկված անձին հասկանալու, լսելու համար	18.4%

Ներկայացված տվյալները վկայում են, որ ընտանեկան բռնության ենթարկված անձանց կողմից իրավապահ մարմիններից, մասնավորապես ոստիկանությունից խուսափելու հիմնական շարժառիթներից մեկը վերջիններիս անտարբերությունն է, ինչպես նաև վերջիններիս շրջանում հոգեբանական պատրաստվածության բացակայությունը ընտանեկան բռնության ենթարկված անձին հասկանալու, լսելու, օգնություն ցույց տալու առումով:

Ավելին, ոստիկանություն դիմած ընտանեկան զոհերի միայն 27.5%-ն է նշել, որ գոհ է ոստիկանության արձագանքից, իսկ 20.5%-ը նշել է, որ բռնարարը պատժվել է: Ըստ մարզերի ոստիկանություն դիմած անձանց գոհունակության ցուցանիշները ներկայացված են գրաֆիկ 30-ում՝

Գրաֆիկ 30. Ոստիկանություն դիմած ընտանեկան բռնության զոհերի զոհունակությունը՝ ըստ մարզերի:



Ոստիկանություն դիմած ընտանեկան զոհերի կողմից ոստիկանության գործունեության հետ կապված դժգոհությունը կապվում է առավելապես վերջիններիս անտարբերության հետ՝ 65.8%: Ոստիկանության գործունեությունից դժգոհություն հայտնած անձանց 17.9%-ի կողմից էլ նշվեց ապացույցների անբավարարությունը բռնարարին պատասխանատվության ենթարկելու հարցում: Ընդ որում, պատասխանների նույն համամասնությունը գրանցվեց նաև ՀՀ մարզերում:

Գրաֆիկ 31. Ոստիկանություն դիմած ընտանեկան բռնության զոհերի դժգոհության պատճառը:



Գրաֆիկ 32. Ոստիկանություն դիմած ընտանեկան բռնության զոհերի դժգոհության պատճառը՝ ըստ մարզերի:

Հարցվածներին առաջարկվեց պատասխանել նաև մի շարք հարցերի կապված ընտանեկան բռնության ականատես լինելու հետ: Մասնավորապես այն հարցին, թե «վերջին 2 տարվա ընթացքում ականատես եղե՞լ եք ընտանեկան բռնության» դրական պատասխանեցին հարցվածների 67.1%-ը:

Գրաֆիկ 33. Վերջին 2 տարվա ընթացքում ընտանեկան բռնության ականատես դառնալը՝ ըստ մարզերի:



Ընտանեկան բռնության դեպքերին ականատես անձանց 88.3%-ը նշել են, որ տուժողի կարգավիճակում եղել են իգական սեռի ներկայացուցիչները:

Գրաֆիկ 34. Ընտանեկան բռնության զոհի սեռը՝ ըստ մարզերի:



Ընդ որում, տուժածների ամենամեծ խումբը կազմել են 21-40 տարիքային խմբի ներկայացուցիչները:

Գրաֆիկ 35. Ընտանեկան բռնության զոհի տարիքը:



Գրաֆիկ 36. Ընտանեկան բռնության զոհի տարիքը՝ ըստ մարզերի:



Ընտանեկան բռնության ականատեսների 56.4%-ը նշել են, որ զոհի նկատմամբ բռնություն կիրառվել է զոհի ներկայիս կամ նախկին ամուսնու կողմից: Զավակի կողմից գործադրված բռնության մասին են հաղորդել ընտանեկան բռնության ականատես եղած անձանց 9%-ը, իսկ սկեսուր/սկեսրայրի կողմից՝ հարցվածների 12.7%-ը:

Գրաֆիկ 37. Ձեր կողմից ականատես եղած ընտանեկան բռնության դեպքի ժամանակ ո՞ւմ կողմից է կիրառվել բռնությունը:



Գրաֆիկ 38. Ձեր կողմից ականատես եղած ընտանեկան բռնության դեպքի ժամանակ ո՞ւմ կողմից է կիրառվել բռնությունը՝ ըստ մարզերի:



Ընտանեկան բռնության ականատեսները նշել են, որ հիմնականում զոհի նկատմամբ բռնարարի կողմից կիրառվել է ծեծ կամ մարմնական վնաս է

պատճառվել (68.7%), 47.5%-ը ականատես է եղել սպառնալիքի, ահաբեկման: Այս օրինաչափությունը նկատվել է նաև ՀՀ մարզերում:

Գրաֆիկ 39. Ընտանեկան բռնության ի՞նչ տեսակի եք ականատես եղել:



Գրաֆիկ 40. Ընտանեկան բռնության ի՞նչ տեսակի եք ականատես եղել՝ ըստ մարզերի:



Դեպքերի 39.4%-ի դեպքում ընտանեկան բռնության ականատես եղած հարցվածները նշել են, որ ընտանեկան բռնության դեպքի ժամանակ ոտնձգողը եղել է ալկոհոլային կամ թմրանյութային հարբածության վիճակում: Ըստ մարզերի պատկերը ներկայացված է գրաֆիկ 41–ում:

Գրաֆիկ 41. Ընտանեկան բռնության ականատես լինելու դեպքի ժամանակ ոտնձգողը եղե՞լ է հարբածության վիճակում՝ ըստ մարզերի:



Ընտանեկան բռնության ականատես եղած անձանց 54.8%-ի պնդմամբ, ընտանեկան բռնության զոհ դարձած անձը ոտնձգության ենթարկվելիս և դրանից հետո ոչինչ չի արել, իսկ 27%-ը դիմել է բարեկամների օգնությանը:

Գրաֆիկ 42. Ընտանեկան բռնության ականատես լինելու դեպքի ժամանակ զոհի արձագանքը:



Գրաֆիկ 43. Ընտանեկան բռնության ականատես լինելու դեպքի ժամանակ զոհի արձագանքը՝ ըստ մարզերի:



Աղյուսակ 11. Եթե ընտանեկան բռնության ենթարկվելիս չեք վստահում ոստիկանությանը, ապա ի՞նչն է դրա պատճառը՝

բռնություն գործադրողը նրա հարազատն է	35.3%
ամաչում է իր նկատմամբ կատարված արարքի բնույթից	18.1%
խուսափում է ավելորդ քաշքշուկներից	12.1%
չի վստահում ոստիկանությանը վերջինիս կոռումպացվածության պատճառով	3.9%
կատարվածի վերաբերյալ իրեղեն ապացույցներ չունի	2.2%
նախկինում դիմել է ոստիկանություն, բայց ապարդյուն	0.9%
վախենում է ոստիկանության աշխատակիցների ոչ կոռեկտ վերաբերմունքից	2.6%
հույս ունի, որ ամեն ինչ շուտով կհարթվի	10.3%

արարքը բավականաչափ լուրջ չի համարում	3.4%
վախենում է բռնարարի վրեժխնդրությունից	4.3%
ոստիկանությունը հորդորում է ընտանիքը չքայքայելու համար համակերպվել	1.7%
ոստիկանությունը անտարբեր վերաբերմունք է դրսևորում	1.7%
ոստիկանության աշխատակիցները տարրական հոգեբանական պատրաստվածություն չունեն ընտանեկան բռնության ենթարկված անձին հասկանալու, լսելու համար	3.5%

Ինչպես և ընտանեկան բռնության զոհերի պարագայում, այնպես էլ նման դեպքերի ականատես անձանց պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ զոհի կողմից իրավապահ մարմիններ չդիմելու հիմնական պատճառը այն է, որ բռնություն գործադրողը զոհի հարազատն է և նա ցանկություն չունի բռնարար հարազատին տեսնել պատասխանատվության ենթարկված:

Այն հարցին, թե Ձեր կարծիքով, ո՞րն է ՀՀ-ում ընտանեկան բռնության հիմնական պատճառը, հարցվածների 54.9%-ը նշել է սոցիալ-տնտեսական ծանր պայմաններն ու գործազրկությունը, 17%-ը որպես այդպիսին դիտել է ալկոհոլային/թմրանյութային հարբածությունը, իսկ 16.15-ը՝ ազգային մենթալիտետը:

Գրաֆիկ 44. Ձեր կարծիքով ո՞րն է ՀՀ-ում ընտանեկան բռնության հիմնական պատճառը:



Հավելված

Հարցաթերթիկ

Հարգելի հարցվող

Այս հարցման նպատակն է պարզել ՀՀ-ում ընտանեկան բռնության արդի վիճակը, բնակչության կողմից դրա ընկալման մակարդակն ու դրանից տուժելու հաճախականությունը, ինչպես նաև ՀՀ-ում ընտանեկան բռնության հիմնական պատճառներն ու ոստիկանության դերը ընտանեկան բռնության կանխարգելման գործընթացում: Հարցումն անանուն է. Ձեր տվյալները (անուն, ազգանուն, հասցե) գրելու կարիք չկա: Ձեր պատասխաններն անչափ կարևոր են. դրանց ամփոփման հիման վրա միջոցառումներ պետք է մշակվեն ընտանեկան բռնության կանխարգելման, և հատկապես՝ ոստիկանության կողմից այդ ուղղությամբ արդյունավետ գործունեության իրականացման համար:

1. Ձեր սեռը

□ արական □ իգական

2.Ձեր տարիքը

□ 14-17 □ 18-25 □ 26-30 □ 31-40

□ 41-50 □ 51-60 □ 61-ից բարձր

3. Ձեր ընտանեկան դրությունը

□ չամուսնացած □ ամուսնացած □ ամուսնալուծված □ այրի

4. Ձեր կրթությունը

□ կրթություն չունեմ □ 8-ամյա

□ միջնակարգ □ թերի բարձրագույն

□ միջնակարգ մասնագիտական □ բարձրագույն

5. Ձեր զբաղմունքը

□ բանվոր
□ գյուղատնտեսությամբ զբաղվող
□ հանրային ծառայող
□ գործարար
□ ուսանող
□ աշակերտ
□ թոշակառու
□ չեմ աշխատում
□ ոստիկան

6. Ձեր բնակության վայրը

մարզ---------- քաղաք----------
գյուղ---------- համայնք----------

1.Ներքոշարադրյալներից ո՞րն է ըստ Ձեզ հանդիսանում ընտանեկան բռնություն (կարող եք նշել մի քանի պատասխան):

□ ծեծելը, մարմնական վնաս պատճառելը
□ վախեցնելը, սպառնալիքը
□ սեքսուալ բռնությունը
□ ընտանիքի չափահաս անդամի ֆինանսական միջոցները խստիվ վերահսկելը
□ ընտանիքի չափահաս անդամի ազատ տեղաշարժումը խստիվ վերահսկելը

2.Ձեր կարծիքով ՀՀ-ում ընտանեկան բռնությունը տարածվա՞ծ է:

□ տարածված չէ □բավականին տարածված է
□ այնքան էլ տարածված չէ □շատ տարածված է

3.Ձեր կարծիքով վերջին 3 տարվա ընթացքում ՀՀ-ում ընտանեկան բռնությունը աճել է, թե՞ նվազել:

□ նվազել է □ աճել է, բայց ոչ շատ
□ փոփոխություն չի եղել □ շատ է աճել

4.Ձեր կարծիքով որտե՞ղ է առավել տարածված ընտանեկան բռնությունը:

□ քաղաքում □ գյուղում

5. Ձեր հանդեպ ընտանիքի անդամի կողմից երբևէ ներքոշարադրյալներից ի՞նչ է կիրառվել:

□ ծեծ, մարմնական վնասի պատճառում
□ սպառնալիք, ահաբեկում
□ ազատ տեղաշարժման խստիվ վերահսկում
□ ֆինանասական միջոցների վերահսկում
□ սեքսուալ բռնություն
□ ոչինչ
□ այլ----------

6. Եթե այո, ապա ու՞մ կողմից:

□ հոր կողմից
□ մոր կողմից
□ եղբոր կողմից
ամուսնու/զուգընկերոջ/ կողմից
□ նախկին ամուսնու/զուգընկերոջ/ կողմից
□ ընտանիքի այլ անդամի կողմից
□ քրոջ կողմից
□զավակի կողմից
□ ներկայիս
□ սկեսրոջ/ սկեսրայրի կողմից

7. Ձեր հանդեպ ընտանիքի անդամի կողմից վերջին 2 տարվա ընթացքում ներքոշարադրյալներից ի՞նչ է կիրառվել:

□ ծեծ, մարմնական վնասի պատճառում
□ սպառնալիք, ահաբեկում
□ ազատ տեղաշարժման խստիվ վերահսկում
□ ֆինանսական միջոցների վերահսկում
□ սեքսուալ բռնություն
□ ոչինչ
□ այլ----------

8. Եթե այո, ապա ու՞մ կողմից:

□ հոր կողմից
□ մոր կողմից
□ եղբոր կողմից
ամուսնու/զուգընկերոջ/ կողմից
□ նախկին ամուսնու/զուգընկերոջ/ կողմից
□ ընտանիքի այլ անդամի կողմից
□ քրոջ կողմից
□ զավակի կողմից
□ ներկայիս
□ սկեսրոջ/ սկեսրայրի կողմից

9. Ընտանեկան բռնությունից հետո երբևէ հեռացե՞լ եք տանից:

□ այո
□ ոչ

10. Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

□ դուք ֆինանսապես կախված եք նրանից
□ հույս ունեիք, որ այդ ամենը շուտով կավարտվի
□ գնալու տեղ չունեք
□ վախենում եք բարեկամների արձագանքից
□ վախենում եք ամուսնալուծվածի պիտակ կրելուց
□ չգիտեմ, ում պետք է դիմել նման դեպքերում
□ այլ----------

11. Եթե բնակարան և ֆինանսական անկախություն ունենայիք, կլքեի՞ք Ձեր հանդեպ բռնություն գործադրած անձին:

□ այո
□ ոչ

12. Բռնարարը բռնություն գործադրելիս եղե՞լ է արդյոք թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ:

□ այո
□ ոչ

13. Ի՞նչ եք արել բռնությունը դադարեցնելու համար:

□ հակահարված եք հասցրել
□ դիմել եք բարեկամների օգնությանը
□ դիմել եք իրավապահ մարմիններ
□ դիմել եք հասարակական կազմակերպությունների
□ դիմել եք
□ այլ----------
□ ոչինչ չեք արել

14. Եթե իրավապահ մարմիններ չի դիմել, ապա ինչու՞:

□ բռնություն գործադրողը Ձեր հարազատն է
□ ամաչում եք Ձեր նկատմամբ կատարված արարքի բնույթից
□ խուսափում եք ավելորդ քաշքշուկներից
□ չեք վստահում ոստիկանությանն
□ նախկինում դիմել եք ոստիկանություն, բայց ապարդյուն
□ վախենում եք ոստիկանության աշխատակիցների ոչ կոռեկտ վերաբերմունքից
□ հույս ունեք որ ամեն ինչ շուտով կհարթվի
□ արարքը բավականաչափ լուրջ չէր
□ վախենում եք բռնարարի վրեժխնդրությունից
□ այլ----------

15. Եթե չեք վստահում ոստիկանությանը, ապա ո՞րն է դրա պատճառը:

□ ոստիկանության կոռումպացվածությունը

□ ոստիկանությունը բավարար նյութատեխնիկական հնարավորություններ չունի ինձ օգնելու համար
□ նրանք հորդորում են ընտանիքը չքայքայելու համար համակերպվել
□ անտարբեր վերաբերմունք են դրսևորում
□ նախկինում նրանց հետ ունեցածս առնչությունը բացասական էր
□ ոստիկանությունում ընտանեկան բռնության հարցերով զբաղվում են մյուս սեռի ներկայացուցիչները, և ես ինձ հարմարավետ չեմ զգում նրանց ինձ հետ տեղի ունեցածը պատմել
□ կատարվածի վերաբերյալ իրեղեն ապացույցներ չունեմ
□ ոստիկանության աշխատակիցները տարրական հոգեբանական պատրաստվածություն չունեն ընտանեկան բռնության ենթարկված անձին հասկանալու, լսելու համար
□ այլ----------

16. Եթե դիմել եք ոստիկանություն, ապա զո՞հ եք նրանց արձագանքից:
□ այո □ ոչ

17. Եթե ոչ, ապա ինչու՞:
□ ապացույցները չբավարարեցին
□ ոստիկանությունը գործին ընթացք չտվեց կոռուպցիայի պատճառով
□ ոստիկանությունը կատարվածը անտարբերության մատնեց
□ ոստիկանությունը ուշ արձագանքեց
□ այլ----------

18. Բռնարարը պատժվե՞ց:
□ այո □ ոչ

19. Դուք վերջին երկու տարվա ընթացքում եղե՞լ եք ընտանեկան բռնության ականատես:
□ այո □ ոչ

20.Եթե այո, ապա տուժողի սեռը:
□ կին □ տղամարդ

21. Տուժողի տարիքը:
□ մինչև 14 □ 15-20 □ 21-40
□ 41-60 □ 61+

22. Ու՞մ կողմից է իրականացվել ոտնձգությունը:

□ տուժողի հոր/ մոր
□ տուժողի քրոջ/եղբոր
□ տուժողի զավակի
□ տուժողի սկեսրոջ/ սկեսրայրի կողմից
□ տուժողի ներկայիս ամուսնու/զուգընկերոջ/ կողմից
□ տուժողի նախկին ամուսնու/զուգընկերոջ/ կողմից
□ ընտանիքի այլ անդամի կողմից

23. Ընտանեկան բռնությունը ինչու՞մն է դրսևորվել:

□ ծեծ, մարմնական վնաս պատճառելը
□ վախեցնել, սպառնալիք
□ սեքսուալ բռնություն
□ ֆինանսական միջոցների խստիվ վերահսկում
□ ազատ տեղաշարժման խստիվ վերահսկում
□ այլ----------

24. Բռնարարը եղել է արդյո՞ք թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ:

□ այո
□ ոչ

25. Ընտանեկան բռնությունից հետո տուժողը ի՞նչ է արել:

□ հակահարված է հասցրել
□ դիմել է բարեկամների օգնությանը
□ դիմել է իրավապահ մարմիններ
□ դիմել է հասարակական կազմակերպությունների
□ այլ----------
□ ոչինչ չի արել

26. Եթե տուժողը ոչինչ չի ձեռնարկել, ապա ինչու՞:

□ ֆինանսապես կախված վիճակում է
□հույս ունի, որ այդ ամենը շուտով կավարտվի
□վախենում է հասարակության արձագանքից
□ գնալու տեղ չունի
□ վախենում է ամուսնալուծվածի պիտակ կրելուց
□ չգիտի, ում պետք է դիմել նման դեպքերում
□ այլ----------

27. Եթե իրավապահ մարմիններ չի դիմել, ապա ինչու՞:

□ բռնություն գործադրողը նրա հարազատն է
□ ամաչում է իր նկատմամբ կատարված արարքի բնույթից
□ խուսափում է ավելորդ քաշքշուկներից

□ չի վստահում ոստիկանությանը վերջինիս կոռումպացվածության պատճառով
□ կատարվածի վերաբերյալ իրեղեն ապացույցներ չունի
□ նախկինում դիմել է ոստիկանություն, բայց ապարդյուն
□ վախենում է ոստիկանության աշխատակիցների ոչ կոռեկտ վերաբերմունքից

28. Եթե դիմել է ոստիկանություն, ապա գո՞հ է նրանց արձագանքից:
□ այո □ ոչ

29. Եթե ոչ, ապա ինչու՞:
□ ապացույցները չբավարարեցին
□ ոստիկանությունը գործին ընթացք չտվեց կոռուպցիայի պատճառով
□ ոստիկանությունը կատարվածը անտարբերության մատնեց
□ այլ----------

30. Ձեր կարծիքով ո՞րն է ՀՀ-ում ընտանեկան բռնության հիմնական պատճառը:
□ գործազրկությունը
□ ալկոհոլային և թմրանյութերից կախվածության տարածվածությունը
□ ազգային առանձնահատկությունները
□ սոցիալ-տնտեսական ծանր պայմանները և աղքատությունը
□ իրավապահ մարմինների անտարբերությունը այս հարցում
□ ԶԼՄ-երով բռնության տեսարանների հաճախակի ցուցադրումը
□ այլ----------

Շնորհակալություն մեզ հետ համագործակցելու և հարցերին պատասխանելու համար: